ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.06.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/65

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Կարապետ Սայադի Եսայանի կողմից 04.05.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **Կարապետ Սայադի Եսայանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

Կարապետ Սայադի Եսայանը 04.05.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պատվիրատուն իր կարիքների համար 16.04.2018թ. հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարարությունում սպորտային ունեցվածքի մատակարարման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 26.04.2018թ. ժամը 10:30-ը:

26.04.2018թ. ժամը 9:35-ին փորձել ենք բեռնել փաթեթը, բայց ծրագիրը մերժել է, քանի որ հայտերը բացվել են ժամը 9:30-ին, սակայն գնանշման հարցման ընթացակարգի հրավերի մեջ բացման ժամը նշված է եղել՝ 10:30-ն:

Այդ պատճառով գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից սխալ է թույլ տրվել:

Գտնում ենք, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, համաձայն, որի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

Կարապետ Սայադի Եսայանը բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է՝ չեղյալ համարել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով մրցույթը և հայտարարել նոր մրցույթ հստակ ժամկետով որպեսզի մենք կարողանանք մասնակցել:

Կարապետ Սայադի Եսայանը պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ Վահան Սահակյանը և Տիգրան Գասպարյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Կարապետ Սայադի Եսայանի կողմից 04.05.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Բողոքներ քննող անձի 16.05.2018թ. գրությանն ի պատասխան 22.05.2018թ. թիվ 03/26-2/[1231843]-18 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ սպորտային ունեցվածքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման հայտարարության տեքստում սահմանված է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, 2018թ. ապրիլի 26-ը, ժամը 10:30-ն:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.2 ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել համակարգի միջոցով ոչ ուշ, քան 2018թ. ապրիլի 26-ը, ժամը 10:30-ն: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը չեն ընդունվում համակարգի կողմից:

Կարապետ Սայադի Եսայանը 04.05.2018թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը 16.04.2018թ. հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 26.04.2018թ. ժամը 10:30-ը: Վերջինս 26.04.2018թ. ժամը 9:35-ին փորձել է բեռնել փաթեթը, սակայն ծրագիրը մերժել է, քանի որ հայտերի բացումը տեղի է ունեցել ժամը 9:30-ին, մինչդեռ Հրավերով բացման ժամը սահմանված է եղել 10:30-ին:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ հայտերի բացումը տեղի է ունեցել 26.04.2018թ. ժամը 09:30-ին և ընդունեց, որ թե հայտարարությամբ, թե Հրավերով՝ հայտերի բացման ժամկետը նշված է եղել ժամը 10:30-ն: Պատվիրատուի ներկայացուցիչը պատճառաբանեց, որ armeps համակարգում հայտերի բացման ժամ է սահմանվել 10:30-ը, սակայն համակարգը հայտերը բացել է մեկ ժամ շուտ:

Բողոքներ քննող անձը 16.05.2018թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնելով հետևյալը.

«Քաղաքացի Կարապետ Եսայանի կողմից 04.05.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք:

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար՝ սպորտային ունեցվածքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 26.04.2018 ժամը 10:30-ը:

Քաղաքացի Կարապետ Եսայանը ներկայացված բողոքով հայտնել է, որ 26.04.2018թ. ժամը 9:35-ին www.armeps.am համակարգի միջոցով փորձել է ներբեռնել մրցույթի փաթեթը, սակայն ծրագիրը մերժել է, քանի որ հայտերը բացվել են ժամը 9:30-ին, ինչը հաստատեց նաև Պատվիրատուի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ տրամադրել www.armeps.am համակարգում նշված ընթացակարգի հայտերի բացման ժամկետի վերաբերյալ տեղեկատվություն:»:

Ի պատասխան Բողոքներ քննող անձի 16.05.2018թ. գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 22.05.2018թ. թիվ 03/26-2/[1231843]-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ էլեկտրոնային գնումների համակարգում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 26.04.2018թ. ժամը 09:30-ը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ էլեկտրոնային գնումների համակարգն ավտոմատ ծանուցմամբ ընթացակարգերին բաժանորդագրված օգտատերերին հայտերի բացումից մեկ օր առաջ ծանուցում է հայտի ներկայացման վերջնաժամկետի ավարտի վերաբերյալ:»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 27-րդ հոդվածի՝ 2-րդ մասի՝

- 9-րդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հայտեր ներկայացնելու ձևի, տեղի և ժամկետի մասին տեղեկություններ,

- 11-րդ կետի համաձայն՝ գնումների հայտարարությունը պարունակում է հայտերի բացման ձևի, վայրի, օրվա և ժամի մասին տեղեկություններ:

- 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման հայտարարության տեքստում հայտերի բացման ժամկետը սահմանված է եղել՝ 2018թ. ապրիլի 26-ը, ժամը 10:30-ն:

- Հայտերի բացումը տեղի է ունեցել՝ 2018թ. ապրիլի 26-ը, ժամը 09:30-ն:

Նկատի ունենալով այն փաստական հանգամանքը, որ Պատվիրատուի կողմից էլեկտրոնային գնումների համակարգում ՀՀ պաշտպանության նախարարության

կարիքների համար հայտարարված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 26.04.2018թ. ժամը 09:30-ն, իսկ Ընթացակարգի հրավերում և հայտարարությունում հայտերի բացման ժամկետ է սահմանվել 26.04.2018թ. ժամը 10:30-ը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ Բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարապետ Սայադի Եսայանի կողմից 04.05.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-2/6 ծածկագրով գնանշման հարցումը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ